ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք **15/12/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Թարո Ավետյանը, Սիմոն Բաբայանը, Սոնա Կարապետյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը, Համբարձում Ջանոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անուշ Ղազարյանը

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Վայք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի թվով 12-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին/զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
2.Վայք համայնքի Վայք քաղաքի Ա.Թովմասյան փողոցի պուրակում գտնվող ուռենին հատելուն թույլտվություն տալու մասին /զեկուցող՝ Գ.Գևորգյան/:
3.Վայք համայնքի Վայք քաղաքի Կամոյի փողոցի 10 հասցեում, մայթեզրին գտնվող ընկուզենին հատելուն թույլտվություն տալու մասին /զեկուցող՝ Գ.Գևորգյան/:
4.Վայք համայնքի վարչական սահմաններում՝ Երևան- Մեղրի Մ2 միջպետական ճանապարհի եզրին գտնվող, երթևեկությանը խանգարող ծառերի չորացած ճյուղերը հատելուն թույլտվություն տալու մասին /զեկուցող՝ Գ.Գևորգյան/:
5.Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան փ. 8/10 հասցեում գտնվող, համայնքային

սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային եղանակով օտարելու, վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
6.Վայք համայնքի Զառիթափ բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
7.Վայք համայնքի Հերհեր բնակավայրում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
8.Դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
9.Վայք համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ-	Դեմ-	Ձեռնպահ-
9	0	0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՊՈՒՐԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՒՌԵՆԻՆ ՀԱՏԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով.

1.Թույլատրել հատել Վայք համայնքի Վայք քաղաքի Ա.Թովմասյան փողոցի պուրակում գտնվող ուռենին, քանի որ ներսից փտած է և գտնվում է ընկնելու վտանգի տակ:

2.Ստացված վառելափայտը անհատույց հատկացնել Վայք համայնքի սոցիալապետ անապահով և Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑԻ 10 ՀԱՍՑԵՈՒՄ, ՄԱՅԹԵՋՐԻՆ ԳՏՆՎՈՂ ԸՆԿՈՒՉԵՆԻՆ ՀԱՏԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով.

1.Թույլատրել հատել Վայք համայնքի Վայք քաղաքի Կամոյի փողոցի 10 հասցեում, մայթեզրին գտնվող ընկուզենին, քանի որ ծառի արմատները խարխլում են հարակից բնակելի տան հիմքերը:

2.Սահմանել հատված ծառի վաճառքի գինը 1խմ-ի համար՝ 18 000(տասնութ հազար) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ՝ ԵՐԵՎԱՆ-ՄԵՂՐԻ Մ2 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵԶՐԻՆ ԳՏՆՎՈՂ, ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆԸ ԽԱՆԳԱՐՈՂ ԾԱՌԵՐԻ ՉՈՐԱՑԱԾ ՃՅՈՒՂԵՐԸ ՀԱՏԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով.

1.Թույլատրել հատել Վայք համայնքի վարչական սահմաններում՝ Երևան- Մեղրի Մ2 միջպետական ճանապարհի եզրին գտնվող, ծառերի (ուռենի, բարդի) չորացած ճյուղերը, քանի որ խանգարում են երթևեկությանը:

2.Ստացված վառելափայտը անհատույց հատկացնել Վայք համայնքի սոցիալապես անապահով և Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ Ս.ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 8/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1.Համաձայնություն տալ Վայք համայնքի Վայք քաղաքի Ս.Շահումյան փողոցի 8/10 հասցեում գտնվող 10-003-0011-0139 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 20102023-10-0033, գաղտնաբառ՝ VYTVIIQVCBVF) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,00572 հա) հասարակական կառուցապատման նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 107 410 (մեկ հարյուր յոթ հազար չորս հարյուր տասը) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով , Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով.

1.Վայք համայնքի Ձառիթափ բնակավայրում գտնվող, 10-022-0238-0046 կադաստրային ծածկագրով, 0.0440 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (հողատեսքը՝ այլ) նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) նպատակային նշանակության հողերի:

4. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով , Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով.

1.Վայք համայնքի Հերհեր բնակավայրում գտնվող, 10-028-0174-0014 կադաստրային ծածկագրով, 0.1 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (հողատեսքը՝ այլ) նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) նպատակային նշանակության հողերի:

2.Վայք համայնքի Հերհեր բնակավայրում գտնվող, 10-028-0174-0004 կադաստրային ծածկագրով, 0.13711 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (հողատեսքը՝ վարելահող) նպատակային նշանակությունը փոխել որպես ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների) նպատակային նշանակության հողերի:

3.Վայք համայնքի Հերհեր բնակավայրում գտնվող, 10-028-0174-0015 կադաստրային ծածկագրով, 0.03376 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (հողատեսքը՝ այլ) նպատակային նշանակությունը փոխել որպես ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների) նպատակային նշանակության հողերի:

4. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Վայք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով
և հիմք ընդունելով Վայք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու հարցերի մշտական հանձնաժողովի թիվ 12 և 13 արձանագրությունները՝

1. Վայք համայնքի 2023 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Վայք համայնքի հետևյալ բնակիչներին՝

.Էլինա Սամվելի Սարգսյան՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ

.Հասմիկ Գեղամի Հակոբյան՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ

.Նարեկ Հրաչիկի Առաքելյան՝ 100 000(մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ

.Վերգուշ Գալուստի Ղարիբյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ

.Առաքել Գրիշայի Առաքելյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ

.Անահիտ Խաչիկի Հարությունյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ

.Սամվել Սերոժի Սիմոնյան՝ 50 000(հիսուն հազար) ՀՀ դրամ

.Ռիմա Գառնիկի Բաղալյան՝ 100 000(հարյուր հազար) ՀՀ դրամ

.Անահիտ Հայրապետի Դավթյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ

.Արմինե Օնիկի Զոհրաբյան՝ 50 000(հիսուն հազար) ՀՀ դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի փետրվարի 14-ին, ժամը՝ 15:00-ին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Ավագանու անդամներ

ՇՈՒՇԱՆԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Անուշ Ղազարյանը

_____